ԲՈԹՍՎԱՆԱԿԱՆ ՀՐԱՇՔ. ՀՐԱ՞ՇՔ...

DOI: 10.52174/2579-2989_2021_4_77

Հիմնաբառեր. *Բոթսվանա, ինստիտուտներ, ադամանդներ, նեոլիբերալիզմ, ժողովրդավարություն, Սերեցե Խամա*

Ալբերտ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ

2012 թ. ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությամբ: ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում ստացել է տնտեսագիտության մագիստրոսի որակավորում՝ «Մենեջմենթ» մասնագիտությամբ, 2017 թ.՝ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2018 թ.-ից դասավանդում է ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնում:

2020 թ.-ից «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող է:

Հեղինակ է 12 գիտական հոդվածների:

1960 թ.-ից ի վեր, երբ Աֆրիկայի երկրների մեծ մասն անկախություն ստացավ, մայրցամաքը հիմնականում զուգորդվում էր աղքատության և թերզարգացածության, իսկ Հարավսահարյան Աֆրիկան՝ ծայրահեղ աղքատության հետ: Սակայն, Բոթսվանան իր տնտեսական առաջընթացով ու զարգացածության մակարդակով առանձնանում է ոչ միայն Հարավսահարյան Աֆրիկայում, այլև ողջ աշխարհամասում: Ներկայացվող հոդվածում հեղինակը փորձում է լույս սփռել Բոթսվանայի տնտեսական հաջողության «գաղտնիքների» վրա՝ վեր հանելով և վերլուծելով դրանց նպաստող հիմնական գործոնները: Չլինելով աֆրիկյան խնդիրների փորձագետ, սակայն ինչ-որ չափով ուսումնասիրած լինելով Բոթսվանայի փորձը՝ նա հոդվածի վերջում հանդես է գալիս առաջարկով, որը, նրա կարծիքով, էլ ավելի կխթանի Բոթսվանայի տնտեսական հաջողությունները:

1960 թ.-ից ի վեր, երբ Աֆրիկայի երկրների մեծ մասն անկախություն ստացավ, մայրցամաքը հիմնականում զուգորդվում էր աղքատության և թերզարգացածության, իսկ Հարավսահարյան Աֆրիկան՝ ծայրահեղ աղքատության հետ: Ու թեև «սև աշխարհամասը» հարուստ է բազմապիսի բնական ռեսուրսներով, այստեղ գտնվող շատ երկրների դեպքում դրանք ոչ միայն չեն նպաստում տնտեսական զարգացմանը, այլև խորացնում են անհավասարությունը և, ինչու ոչ, հող նախապատրաստում, այսպես կոչված, «հոլանդական հիվանդության» համար[1]: Իսկ որոշ տեսաբաններ էլ ռե-

[12] Christine Ebrahimzadeh, Dutch Disease: Wealth Managed Unwisely', 24 Feb, 2020, https://www.imf.org/external/pubs/ft/fandd/basics/dutch.htm



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Աֆրիկյան մի շարք երկրների՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ անվանական արժեքը (ԱՄՆ դոլար)[2], 2020 թ.

սուրսներով հարուստ երկրների՝ առաջին հայացքից անվերջ թվացող աղքատությունը կոչում են «ռեսուրսային անեծք» (resource curse)՝ դրան տալով բազմաթիվ, հաճախ նույնիսկ հակասական բացատրություններ: Սակայն, հենց Հարավսահարյան Աֆրիկայում կա մի երկիր, որը դուրս է այդ տրամաբանությունից և իր տնտեսական զարգացածության ու քաղաքական ինստիտուտների հասունության մակարդակով առանձնանում է աֆրիկյան գրեթե բոլոր երկրներից: Այդտեղ ռեսուրսների, մասնավորապես՝ ադամանդի առատությունը ոչ միայն չի խաթարել, այլև նպաստել է տնտեսական զարգացմանը, իսկ կոռուպցիայի մակարդակը, եթե հիմնվենք «Թրանսփերենսի ինթերնեշնլ» միջազգային հակակոռուպցիոն կազմակերպության տվյալների վրա, Աֆրիկայում ամենացածրն է՝ ընդ որում, արդեն 18 տարի շարունակ[3]: Այդ երկրում հաստատված են ժողովրդավարական կարգեր, իսկ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն գերազանցում է անգամ հարևան Հարավաֆրիկյան Հանրապետության (ՀԱՀ) ցուցանիշը, որն ընկալվում է որպես հարստության ու ժողովրդավարության օազիս աղքատ ու բռնապետական Աֆրիկայում: Այդ երկիրը Բոթսվանան է: Վերջինս իր տարածքով (581.730 քառ. կմ) համադրելի է Ֆրանսիայի հետ և շուրջ երկու անգամ գերազանցում է Իտալիային, իսկ բնակչության թվով (մոտ 2.3 մլն) մոտ է մեր երկրին:

Գծապատկեր 1-ում, ըստ Համաշխարհային բանկի տվյալների, ներկայացված են Բոթսվանայի տնտեսական հաջողություններն աֆրիկյան մնացյալ պետությունների, այդ թվում՝ ՀԱՀ-ի համեմատությամբ:

Գծապատկերի տվյալների ուսումնասիրությունից հարց է ծագում. ինչպե՞ս և ինչի՞ շնորհիվ է դեպի ծով ելք չունեցող երկիրը, որը Մեծ Բրիտանիայից անկախանալիս (1966 թ. սեպտեմբերի 30) Աֆրիկայում ամենաաղքատներից մեկն էր (եթե ոչ ամենաաղքատը), դարձել ընդօրինակման առարկա՝ կերտելով սեփական հաջողության պատմությունը...

Ամեն բան չէ, որ «դրախտային» է Բոթսվանայում: Բնակչության շուրջ 20%-ը կամ յուրաքանչյուր 5-րդ բնակիչ այստեղ տառապում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով[4], բարձր է

[2] Transparency International, country data, corruption percepton index, https://www-transparency-org/en/countries/botswana#
[3] World Bank database, GDP per capta in 2020 (current US$), https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?end=2020&start=2020&view=map
[4] Global information and education on HIV and AIDS, HIV and AIDS in Botswana, available at https://www.avert.org/professionals/hiv-around-world/sub-saharan-africa/botswana

գործազրկության մակարդակը՝ 24.9%[5], իսկ աղքատությունը շարունակում է մնալ օրակարգային խնդիր:

Փորձենք գտնել Բոթսվանայի հաջողության պատճառները:

Պատճառ 1. Ինստիտուտներ

Բոթսվանայի փորձն ամենայն մանրամասնությամբ վերլուծել է Դարոն Աճեմօղլուն՝ «Ինչո՞ւ են ազգերը ձախողվում» հայտնի աշխատությունում: Լինելով ինստիտուցիոնալիստ՝ Աճեմօղլուն Բոթսվանայի զարգացումն ու տնտեսական առաջընթացը կապել է երկրում առկա ներառական ինստիտուտների հետ: Մասնավորապես, ըստ Աճեմօղլուի, ինստիտուտները լինում են երկու տեսակի՝ ներառական (inclusive) և կորզող (extracting): Բոթսվանան, մինչ Բրիտանական կայսրության պրոտեկտորատ դառնալը, ունեցել է մեկ կարևոր ներառական ինստիտուտ՝ կգոլտան, որտեղ էլ հավաքվել են բոթսվանական գյուղերի ու համայնքների ավագները: Կգոլտան մեծապես հակակշռել է տոհմապետների իշխանությանը, քանի որ այնտեղ են ընդունվել հիմնական կարևոր որոշումները[6]:

Բոթսվանայում բնակչության մեծ մասը ցվանա ազգության ներկայացուցիչներ են՝ բաղկացած 8 հիմնական տոհմերից՝ Բանգվատո, Բատավանա, Բանգվակեցե, Բակվենա, Բալետե, Բակգալտա, Բարոլոնգ, Բաթլոկվա:

Բոթսվանայի՝ տակավին մինչգաղութային ժամանակաշրջանի ինստիտուտները կարող էին վերանալ կամ վերափոխվել բրիտանական տիրապետության տակ, սակայն, բրիտանացիներն առանձնապես հետաքրքրված չէին այդ աղքատ տարածքով, որտեղ բնակչության մեծ մասը զբաղված էր անասնապահությամբ: Դեռևս չէին հայտնաբերվել ադամանդի հսկայական պաշարները, իսկ փոքրաքանակ բնակչության շուրջ 80%-ն ապրում էր երկրի արևելքում՝ ՀԱՀ-ը Զիմբաբվեին միացնող

ՆԿԱՐ 1

Երեք կգոսիների՝ Բանգվատո տոհմի առաջնորդ Խամա III-ի, Բանգվակեցե տոհմի առաջնորդ Բաթեոնի և Բակվենա տոհմի առաջնորդ Սեբելեի արձանները Բոթսվանայի մայրաքաղաք Գաբորոնեում[7]

երկաթուղու մոտակայքում, որը կառուցվել էր բրիտանական Ռոուդս (Rhodes' British South Africa Company) ընկերության կողմից[8]: Ուստի, կարելի է ենթադրել, որ երկրի մնացած մասում բնակվելու համար դեռևս չկային գրավիչ ու նպաստավոր պայմաններ: 1885 թ.-ին Մեծ Բրիտանիան հայտարարեց բրիտանական Բեչուանալենդ (Բոթսվանան այն ժամանակ այդպես էր կոչվում) պրոտեկտորատի ստեղծման մասին, ինչը պայմանավորված էր սոսկ երկրի ռազմավարական աշխարհագրական դիրքով, քանի որ մի կողմից գերմանացիների տիրապետության տակ գտնվող Հարավարևմտյան Աֆրիկան էր (մերօրյա Նամիբիան), իսկ մյուս կողմից՝ բուրերի պետությունը: Հատկանշական է, որ Բեչուանալենդի առաջնորդներն իրենք էին խընդրել Մեծ Բրիտանիային ապահովել երկրի արտաքին անվտանգությունը՝ զգուշանալով առավել հզոր հարևան երկրների հնարավոր հարձակումներից, որոնց հետևանքով երկիրը կարող էր գրավվել: Ավելին, 1895 թ.-ին ցվանա ազգության երեք տոհմապետները՝ Բանգվատո տոհմի առաջնորդ Խամա III-ը (Բոթսվանայի առաջին նախագահ Սըր Սերեցե Խամայի պապը),

[5] World Bank database, Unemployment, total (% of total labor force) (national estimate) – Botswana, https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.NE.ZS?locations=BW

[6] Acemoglu, Daron, Simon Johnson, and James A. Robinson. An african success story: Botswana. Princeton University Press, 2012, p. 9.

[7] Հատկանշական է, որ արձանը կառուցել է հյուսիսկորեական ընկերություն: Լուսանկարը՝ https://www.diowestmo.org/ կայքից:

[8] Նույն տեղում:

Բանգվակեցե տոհմի առաջնորդ Բաթեոնը և Բակվենա տոհմի առաջնորդ Սեբելեն, հանդիպելով Վիկտորիա թագուհուն, խնդրել էին նրանից, որ պրոտեկտորատը ղեկավարվի անմիջապես Լոնդոնից, այլ ոչ թե ՀԱՀ-ից: Եթե թագուհին մերժեր վերջիններիս խնդրանքը, Բոթսվանան, հավանաբար, ներկայում կլիներ ոչ թե անկախ պետություն, այլ ՀԱՀ-ի կազմում:

Այս ամենն ապահովել էր պրոտեկտորատի հարաբերական անկախությունը և ավանդույթների, սովորույթների ու մշակույթի ինքնավարության պահպանումը: Հետագայում՝ անկախությունից հետո, իշխանությունն ուներ որոշակի ժողովրդավարական լեգիտիմություն, ինչն էլ չեզոքացնում էր աֆրիկյան այլ երկրներին բնորոշ բռնի պայքարը և դրանից բխող անկայունությունն ու հետընթացը: Ավելին, ցվանա ժողովրդի բարքերում արմատացած ժողովրդավարության սաղմնային տարրերը պարունակում էին նաև զսպման և հակակշռման որոշակի բաղադրիչներ, որոնք ունակ էին իշխանության գործողությունները դարձնելու մասամբ կանխատեսելի և նվազ սանձարձակ, ինչի արդյունքում պայքարը հանուն իշխանության չէր վերածվում կենաց-մահու մրցավեճի: Հավելենք նաև, որ անկախությունից ի վեր միակ իշխող ուժը՝ Սըր Սերեցե Խամայի հիմնադրած Բոթսվանայի ժողովրդավարական կուսակցությունը, երկու ազդեցիկ ուժերի՝ անասնապահությամբ զբաղվողների ու ցեղապետների մի յուրօրինակ միավորում էր: Ուստի հետագայում, երբ ադամանդներից ստացված եկամտի շնորհիվ բազմապատկվեց կապիտալի ներհոսքը, բազմապատկվեցին նաև հիմնական շահառուների եկամուտները, և «խաղասեղանին այնքան շատ բան էր դրված», որ ոչ մի անհատ կամ խումբ, իրեն հասանելիք շահաբաժինները մեծացնելու մոլուցքով համակված, չհանդգնեց **«ճոճել այն նավակը»**, **որի մեջ գտնվում են բոլորը:** Այդ իսկ պատճառով բոթսվանական ադամանդները, ի տարբերություն, օրինակ, Սիերա Լեոնեի, չվերածվեցին «արյունոտ ադամանդների[10]»:

ՆԿԱՐ 2

Պատմության մեջ մեծությամբ երկրորդ ալմաստը՝ հայտնաբերված Բոթսվանայում[9]

Պատճառ 2. Ադամանդներ

Բոթսվանայի կառավարությունն իր եկամուտների 30%-ը ստանում է ադամանդի արտահանումից, որը կազմում է երկրի համախառն արտահանման շուրջ 70%-ը[11]: Իսկ ամեն բան սկսվել է կառավարության և ադամանդների համաշխարհային շուկայում գրեթե մենաշնորհային դիրք զբաղեցնող DeBeers ընկերության միջև փոխշահավետ համագործակցությունից, որի արդյունքում Բոթսվանայի կառավարությանը բաժին է ընկնում ադամանդի արդյունահանման շահաբաժինների ուղիղ 50%-ը[12]: Տնտեսագետները հաճախ են խոսում մեկ ռեսուրսից կախվածություն ունենալու բացասական կողմերի և տնտեսության բազմազանեցման (դիվերսիֆիկացման) անհրաժեշտության մասին, և դա ճիշտ է ու անվիճելի: Սակայն, այս պարագայում ևս «բախտը ժպտացել է» Բոթսվանային: Լինելով գրեթե մենաշնորհային ընկերություն՝ DeBeers-ն ի զորու է կարգավորելու համաշխարհային շուկայում ադա-

[9] Լուսանկարը՝ «Արմենպրես» լրատվական գործակալության կայքից, https://armenpress.am/arm/news/826425.html

[10] «Արյունոտ ադամանդների» թեմայի վերաբերյալ տես Ա. Փախլյան, «Աշխարհն առանց արյունոտ ադամանդների», ՀՊՏՀ «Ամբերդ» տեղեկագիր, 2019/1, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://asue.am/upload/files/amberd/Amberd-bulletin.pdf

[11] Reuters, Botswana rough diamond exports down 66% in third quarter, October 30, 2020, avalable at https://www.reuters.com/article/botswana-diamonds-idINL8N2HL70H

[12] Fadool, John M., The Coincidental Economic Miracle: Botswana A Proposal by, (2020), p. 4.

մանդի գները՝ Բոթսվանայի կառավարությանն ապահովելով կայուն ու կանխատեսելի եկամուտներով: Նշենք, որ Բոթսվանայի ադամանդի պաշարները ոչ թե բերուկներում (alluvial deposits) են, այլ հրաբխային խողովակներում (pipe), ինչն էլ ավելի է բարդացնում դրա արդյունահանումը[13]: Ուստի DeBeers ընկերության փորձն ու գիտելիքն ավելի քան անհրաժեշտ էին Բոթսվանային: Այդ իսկ պատճառով երկրում երբևէ չի քննարկվել կառավարության և DeBeers-ի կողմից համատեղ հիմնադրված «Դոբսվանա» ընկերության ազգայնացումը, ինչն էլ, ներդրումների անվտանգության առումով, ստեղծել է բարենպաստ միջավայր: Ադամանդի արդյունահանումից ստացած եկամուտներով կառավարությունը կառուցել է բազմաթիվ ենթակառուցվածքներ, այդ թվում՝ դպրոցներ, մանկապարտեզներ, ճանապարհներ և այլն:

Պատճառ 3. Նեոլիբերալ (նորազատական) քաղաքականություն և մաքսային միություն

Բոթսվանան, ի տարբերություն տարածաշրջանի շատ երկրների, մասնավորապես՝ Զիմբաբվեի, չգնաց ամեն ինչի ազգայնացման ճանապարհով: Ավելին, անկախանալիս, երբ երկրում կար բարձրագույն կրթությամբ ընդամենը 22 և միջնակարգ կրթությամբ մոտ 100 քաղաքացի, կառավարության հանրային ծառայության ոլորտում նախապատվությունը տրվեց օտարազգի, սակայն ուսյալ աշխատակիցներին[14]: Միաժամանակ, ի տարբերություն հետգաղութային Աֆրիկայի այլ առաջնորդների, մասնավորապես՝ Փղոսկրի ափի հանրահայտ նախագահ Թոմաս Սանկարայի ու Գանայի հիմնադիր առաջնորդ Կվամե Նկրումայի, Բոթսվանայի հիմնադիր նախագահ Սըր Սերեցե Խաման ընտրեց ոչ թե, այսպես կոչված, աֆրիկյան սոցիալիզմը, այլ նեոլիբերալիզմը՝ ապահովելով երբեմնի մետրոպոլիա Միացյալ Թագավորության աջակցությունը նորանկախ Բոթսվանայի պետականության կայացման գործընթացին[15]: Այս քաղաքականությունը շարունակեց նաև վերջինիս որդին՝ Յան Խաման, որը 2008-2019 թթ. Բոթսվանայի նախագահն էր: Վերջինս իր քաղաքականության հիմքում դրել էր 4D գաղափարը՝ ժողովրդավարություն (democracy), զարգացում (development), արժանապատվություն (dignity) և կարգապահություն (discipline): Եվ Խաման ավագը, և Խաման կրտսերը փորձում էին իրենց նորազատական օրակարգն առաջ մղել՝ հղում կատարելով բոթսվանական մշակույթին: 1970 թ.-ին շվեդական Ուսպալա քաղաքի Աֆրիկյան ուսումնասիրությունների սկանդինավյան ինստիտուտում Խաման ավագը հայտարարեց, որ սոցիալիզմը, նույնիսկ եթե դրա կողքին ավելացվում է «աֆրիկյան» բառը, կապ չունի իր ժողովրդի մեծամասնության հետ, իսկ «ժողովրդավարություն» ու «զարգացում» բառերն արմատացած են ցվանա լեզվում: Նույն կերպ՝ Խաման կրտսերը գովերգում էր նեոլիբերալ մոդելը ոչ թե բացահայտորեն, այլ հղում կատարելով ցվանա ժողովրդի այն բարքերին ու ավանդույթներին, որոնք այդ պահին իրեն հարմար էին՝ իր օրակարգի առաջմղման համար[16]:

Ինչպես գիտենք, լիբերալիզմը, նախևառաջ, ենթադրում է ժողովրդավարություն և ազատ առևտուր: Անկախությունից ի վեր թեպետ Բոթսվանայում միայն մեկ ուժ է իշխել՝ Բոթսվանայի ժողովրդավարական կուսակցությունը, այնուամենայնիվ Բոթսվանան ժողովրդավարական պետություն է, որտեղ ընտրական գործընթացն արտահայտել է ընտրողների կամքը, իսկ հեղաշրջումներ ու հեղափոխություններ երբեք չեն եղել: 1994 թ. ընտրության ժամանակ, հավաքելով հարաբերականորեն քիչ ձայն, իշխող կուսակցությունը գնացել է ոչ թե բռնությունների, այլ իր սխալների վերլուծության ու շտկման ճանապարհով և ընտրական գործընթացը դարձրել առավել ներառական՝ ընտրելու իրավունք ունե-

[13] Նույն տեղում:
[14] Acemoglu, Daron, Simon Johnson, and James A. Robinson. An african success story: Botswana. Princeton University Press, 2012, p. 1.
[15] Mosime, Sethunya Tshepho, Decolonization Deferred: Seretse Khama Ian Khama's Presidency and the Historical Deradicalization of 'Culture'as a Tool for Resistance in Botswana.
[16] Նույն տեղում:

ցողների տարիքային շեմը 21-ից իջեցնելով 18-ի ու երկրից դուրս բնակվող քաղաքացիներին ընտրելու իրավունք տալով[17]: Բոթսվանայում յուրաքանչյուր տոհմ ունի իր կգոսին (թագավորը կամ առաջնորդը), որի խնդիրն է տոհմի առաջնորդումն ու տոհմային կգոլտաների կազմակերպումը: Խորհրդարանին կից գործում է նաև Նիլտո Յա Դիկգոսի (թարգմանաբար՝ առաջնորդների պալատ, կգոսի՝ առաջնորդ կամ թագավոր) կոչվող խորհրդակցական մարմինը, որը բաղկացած է 35 անդամից, որից 8-ը վերոնշյալ 8 հիմնական տոհմերի առաջնորդներն են, 5-ը նշանակվում են նախագահի կողմից, իսկ 22-ը՝ ընտրվում երկրի տարբեր շրջաններից՝ պաշտոնավարելով 5 տարի ժամկետով[18]:

Ինչ վերաբերում է առևտրին, ապա Բոթսվանան որդեգրել է բավականաչափ ազատական ներդրումային ու առևտրային քաղաքականություն, ինչպես նաև ընդգրկվել Հարավաֆրիկյան մաքսային միությունում, որին անդամակցում են նաև ՀԱՀ-ը, Էսվատինին, Լեսոտոն և Նամիբիան: Ներկայում Բոթսվանայի կառավարությունն իր եկամուտների զգալի մասը ձեռք է բերում երկու աղբյուրից՝ արդյունահանող ընկերությունների ռոյալթիներից և Հարավաֆրիկյան մաքսային միությունից ստացված եկամուտների բաշխումից[19]:

«Պատճառ 4». Սըր Սերեցե Խամա

Ազգերի բարգավաճումը բացատրող շատ տեսություններ կան, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալ չորսը՝ աշխարհագրական, մշակութային, ինստիտուցիոնալ և առաջնորդի անձնային կամային առանձնահատկություններ: Օրինակ՝ հաճախ ենք լսել, որ Սինգապուրի տնտեսական վերելքը կապում են նրա առաջնորդ Լի Կուան Յուի վարած հմուտ քաղաքականության հետ, մինչդեռ բազմաթիվ այլ բռնապետներ առավել հայտնի են իրենց ոճրագործություններով և պետություններին ու ժողովուրդներին հասցրած անդառնալի վնասով: Առաջնորդի դերը հատկապես կարևոր է աֆրիկյան երկրներում, որտեղ հիմնականում չկան ուժեղ ինստիտուտներ ու ժողովրդավարական ավանդույթներ: Բոթսվանայի քաղաքական ու տնտեսական հաջողություններում անգնահատելի է Սերեցե Խամայի դերը: Խաման Բանգավատո տոհմի գահաժառանգ առաջնորդն էր, որ, ստանալով լավ կրթություն Անգլիայում, պատրաստվում էր կառավարել երկիրը: Սակայն, Խամայի ճանապարհը հեշտ չէր, քանի որ նա ամուսնացել էր անգլիացի Ռութ Վիլիամսի հետ, իսկ այդ ժամանակ, հատկապես հարևան ՀԱՀ-ում տեղի ունեցող ապարտեիդի (ռասայական խտրականության) խորապատկերում, այդ ամուսնությունը չողջունվեց ոչ Մեծ Բրիտանիայի, ոչ էլ իր ընտանիքի կողմից: Սակայն, լինելով առանձնաշնորհյալ անձնավորություն, Խաման կարողացավ համոզել Կգոլտային՝ ընդունելու իր ու սպիտակամորթ կնոջ միությունը: Կգոլտայի մեծ մասը բացականչեց՝ «պուլա»[21], որը ցվանա լեզվից թարգմա-

ՆԿԱՐ 3

Բոթսվանայի առաջին նախագահ Սըր Սերեցե Խաման[20]

[17] Acemoglu, Daron, Simon Johnson, and James A. Robinson. An african success story: Botswana. Princeton University Press, 2012, p. 16.
[18] Parliament of Botswana, Ntlo Ya Dikgosi, available at https://web.archive.org/web/20110706165201/http://www.parliament.gov.bw/pgcontent.php?UID=614
[19] Fadool, John M., The Coincidental Economic Miracle: Botswana A Proposal by (2020), p. 5.
[20] Լուսանկարը՝ Alchetron.com կայքից, https://alchetron.com/Seretse-Khama
[21] Mosime, Sethunya Tshepho, Decolonization Deferred: Seretse Khama Ian Khama's Presidency and the Historical Deradicalization of 'Culture'as a Tool for Resistance in Botswana.", p. 192.

նաբար նշանակում է անձրև, ինչպես նաև գործածվում է միմյանց ողջունելիս (ի դեպ, երկրի դրամական միավորը նույնպես կոչվում է պուլա)[22]: Սակայն, բրիտանացիներն այդպես էլ չընդունեցին Խամայի ամուսնությունը բրիտանահպատակ սպիտակամորթ կնոջ հետ, և նա արտաքսվեց: Հետագայում, վերադառնալով Բոթսվանա, Խաման հրաժարվեց գահից և մասնակցեց երկրի պատմության մեջ առաջին ժողովրդավարական ընտրությանը՝ դառնալով Բոթսվանայի առաջին նախագահը: Խամայի կյանքն ու գործունեությունը լավագույնս ներկայացված են 2016 թ. թողարկված «A United Kingdom» ֆիլմում: Սերեցե Խաման կառավարեց մինչև 1980 թ., իսկ վերջինիս հիմնադրած Բոթսվանայի դեմոկրատական կուսակցությունը մինչ օրս երկրի իշխող կուսակցությունն է: Խաման ժողովրդավարության ջատագով ու գիտակ էր, հակառասիստական պայքարի առաջամարտիկ, որ կանգնած էր նաև երկրի տնտեսական բարեփոխումների ակունքներում: Վերջինիս կառավարման տարիներին երկրում մի քանի հարյուր անգամ աճեց ՀՆԱ-ն, մեծացան կրթություն ստացած անձանց թիվը, ավտոճանապարհների քանակը և կենսական նշանակություն ունեցող բազմաթիվ այլ ցուցանիշներ, իսկ Զամբիայում, որը Բոթսվանայի անկախության պահին ուներ վերջինիցս 10 անգամ շատ դպրոցներ և Ուգանդան՝ 70 անգամ, այդպես էլ մինչ օրս համարվում են աղքատ ու հետամնաց: Խամայի կարևոր հաջողություններից մեկը Բոթսվանան ժամանակակից ժողովրդավարական պետության վերածելն էր, այդ թվում՝ կգոսիների (տոհմական առաջնորդների) իշխանության խիստ սահմանափակման ու վերջիններիս արդարադատություն ու հողերի բաշխում իրականացնելու իրավունքից զրկելու միջոցով[23]: Հարկ ենք համարում ընդգծել, որ, լինելով բրիտանական կառավարության կողմից հալածված ու հետապնդված, Խաման ոչ միայն չլծվեց մշակութային ապագաղութացման ու նախկին գաղութատեր երկրի դեմ պայքարի գործին (ինչպես դա տեղի ունեցավ աֆրիկյան այլ երկրներում), այլև բարեկամական հարաբերություններ հաստատեց Մեծ Բրիտանիայի հետ, որից, առաջին հերթին, շահած դուրս եկան իր երկիրն ու ժողովուրդը[24]:

Վերջաբանի փոխարեն

Հարավային Աֆրիկայում՝ Բոթսվանայից հարավ-արևելք, կա մի թագավորություն, որը նախկինում հայտնի էր որպես Սվազիլենդ, իսկ 2018 թ.-ին, շատերի համար անակնկալ կերպով փոխելով իր անունը, դարձավ Էսվատինի: Թագավոր Մսվատի III-ը, որ փոփոխության նախաձեռնողն էր, նշեց, որ մարդիկ արտասահմանում հաճախ իրենց երկիրը շփոթում են Շվեյցարիայի հետ, հետևաբար՝ որոշել են փոխել դրա անվանումը[25]: Սակայն, ակադեմիական գրականության մեջ ոչ թե աղքատ Էսվատինին, այլ հենց Բոթսվանան է մատնանշվում որպես «Աֆրիկայի Շվեյցարիա»[26]: Իսկ ո՞րն է պատճառը: Արդյո՞ք կարելի է Բոթսվանան, Գերմանիայի, Հարավային Կորեայի, Իսրայելի ու նմանատիպ այլ երկրների հետ մեկտեղ, դասել «տնտեսական հրաշք» կատարածների շարքին: Չկա բոթսվանական հրաշք, ինչպես նաև չկան իսրայելական, չինական, ճապոնական, ֆիննական կամ կորեական հրաշքներ: Ըստ բառարանային բացատրություններից մեկի՝ հրաշքը սնոտիապաշտական և կրոնական պատկերացումներով՝ իրերի բնականոն ընթացքից չբխող՝ բնության օրենքների վրա չհիմնված, այլ գերբնական զորությամբ առաջացած երևույթ է[27]: Յուրաքանչյուր երկրի տնտեսական զարգացում ունի իր հստակ բա-

[22] Acemoglu, Daron, Simon Johnson, and James A. Robinson. An african success story: Botswana. Princeton University Press, 2012, p. 19.
[23] Mosime, Sethunya Tshepho, Decolonization Deferred: Seretse Khama Ian Khama's Presidency and the Historical Deradicalization of 'Culture'as a Tool for Resistance in Botswana, p. 194.
[24] Նույն տեղում:
[25] BBC.com Swaziland king renames country 'the Kingdom of eSwatini, 19 April, 2018, available at https://www.bbc.com/news/world-africa-43821512
[26] Botlhale, Emmanuel, The Sir Ketumile Masire factor in the making of Botswana as an 'African Miracle', Botswana Notes and Records 50 (2018), p. 33.
[27] https://bararanonline.com/%D5%B0%D6%80%D5%A1%D5%B7%D6%84

ցատրությունն ու պատճառները: Բոթսվանայի պարագայում, ի թիվս այլ պատճառների, կարող ենք նշել նախքան պետականության ձևավորումը՝ ներառական ինստիտուտների առկայությունը, ադամանդի հսկայական պաշարները, նորազատական առևտրային քաղաքականությունն ու Հարավաֆրիկյան մաքսային միության մաքսավճարների բաշխումից ստացված շահույթը և, վերջապես, Սերեցե Խամայի պետականակենտրոն քաղաքականությունը: Ինչպես վերն ասացինք, դեպի ծով ելք չունեցող Բոթսվանան այսօր էլ քիչ խընդիրներ չունի: Կարծում ենք՝ որպես տնտեսական հաջողությունը զարգացնելու ճանապարհ կարող է լինել հարևան ՀԱՀ-ի հետ տնտեսության առավել խոր ինտեգրումը: Մեր համոզմամբ՝ Բոթսվանայի շահերից է բխում, նախևառաջ, տեխնոլոգիաների փոխանցման և արտադրության համատեղ կազմակերպման պայմանագրերի կնքումը, ինչի շնորհիվ տեղական արտադրողը կընդգրկվի հարավային հարևանի արժեքի շղթաներում, ինչպես նաև մասշտաբից տնտեսման էֆեկտի միջոցով լրացուցիչ եկամուտ ապահովելու հնարավորություն կունենա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Acemoglu, Daron, Simon Johnson, and James A. Robinson. An african success story: Botswana. Princeton University Press, 2012
2. BBC.com Swaziland king renames country 'the Kingdom of eSwatini, 19 April 2018, https://www.bbc.com/news/world-africa-43821512
3. Botlhale, Emmanuel. "The Sir Ketumile Masire factor in the making of Botswana as an ‘African Miracle’." Botswana Notes and Records 50, 2018.
4. Christine Ebrahimzadeh, ‘’ Dutch Disease: Wealth Managed Unwisely’’, 24 Feb. 2020, https://www.imf.org/external/pubs/ft/fandd/basics/dutch.htm
5. Fadool, John M. "The Coincidental Economic Miracle: Botswana A Proposal by." (2020)
6. Global information and education on HIV and AIDS, HIV and AIDS in Botswana, https://www.avert.org/professionals/hiv-around-world/sub-saharan-africa/botswana
7. Mosime, Sethunya Tshepho. "Decolonization Deferred: Seretse Khama Ian Khama’s Presidency and the Historical Deradicalization of ‘Culture’as a Tool for Resistance in Botswana."
8. Parliament of Botswana, Ntlo Ya Dikgosi, https://web.archive.org/web/20110706165201/http://www.parliament.gov.bw/pgcontent.php?UID=614
9. Reuters, Botswana rough diamond exports down 66% in third quarter, October 30, 2020, https://www.reuters.com/article/botswana-diamonds-idINL8N2HL70H
10. Transparency International, country data, corruption percepton index, https://www.transparency.org/en/countries/botswana#
11. World Bank database, GDP per capta in 2020 (current US$), https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?end=2020&start=2020&view=map
12. World Bank database, Unemployment, total (% of total labor force) (national estimate) - Botswana, https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.NE.ZS?locations=BW

Альберт АЙРАПЕТЯН
Ассистент кафедры международных экономических отношений, АГЭУ, кандидат экономических наук

ГЕОЭКОНОМИЧЕСКАЯ ХРОНИКА

ЧУДО БОТСВАНЫ: ДЕЙСТВИТЕЛЬНО ЛИ ЭТО БЫЛО ЧУДО?

Начиная с 1960-х годов, когда большинство стран Африки получили независимость, материк продолжал ассоциироваться с бедностью и чрезвычайно медленным развитием, а тропическая Африка – с крайней бедностью. Несмотря на это, Ботсвана по своему экономическому развитию отличается не только от стран тропической Африки, но и от данного региона. Данная статья проливает свет на "секреты" экономических успехов Ботсваны, ставя во главу угла те факторы, которые способствовали этому. Не являясь экспертом в области африканских стран, но исследуя опыт Ботсваны, автор в эпилоге статьи выступает с предложениями, которые, по его мнению, в свою очередь будут стимулировать дальнейшее экономическое развитие Ботсваны.

Ключевые слова: *Ботсвана, институты, алмазы, неолиберализм, демократия, сэр Серетсе Кхама*

Albert HAYRAPETYAN
PhD in Economics, Assistant Professor in the Chair of International Economics, ASUE

GEOECONOMICAL CHRONICLE

BOTSWANA MIRACLE: WAS IT REALLY A MIRACLE?

From the beginning of the 1960s, when most of the countries of Africa gained independence, the continent continued to be associated with poverty and extremely slow development, while the Sub-Saharan Africa – with extreme poverty. However, Botswana differs not only from the countries of tropical Africa, but also from the rest of the continent in its economic development. This article sheds light on the "secrets" of Botswana's economic success, highlighting the factors that contributed to it. Not being an expert in the field of African countries, but exploring the experience of Botswana, the author in the epilogue of the article comes up with a proposition that, in his opinion, will further stimulate the economic development of Botswana.

Key words: *Botswana, institutions, diamonds, neo-liberalism, democracy, Sir Seretse Khama*